

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

--ի հունվարի 2017 թվականի N ---Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1602-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1602-Ն որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով ձևավորված «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը իր լիազորությունները կիրականացնի մինչև «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության օրենքով սահմանված կարգով պետական գրանցումը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

**Կ Ա Ջ Մ**

**«ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Արկադի Պետրոսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության պետ
Արտաշես Դանիելյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Ռոզա Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ
Սմբատ Անթառանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի օգնական
Մամիկոն Կալոյան	Մանկավարժական խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Թամարա Թովմասյան	Մանկավարժական խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Էլլա Գալուստյան	Ծնողական խորհրդի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Աննա Վարդանյան	Ծնողական խորհրդի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**  
**«ՓՈՔՐ ՄԻԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1602-Ն**  
**ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. Անհրաժեշտությունը**

02.12.2016 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ հրավիրվեց «<Փոքր Միեր>> կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի արտահերթ նիստ, որին մասնակցում էին խորհրդի նախագահը, յոթ անդամներ, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներակայացուցիչը, ՀՀ ԿԳ նախարարության պատասխանատու ստորաբաժանման ներակայացուցիչները և կրթահամալիրի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

Քննարկելով «<Փոքր Միեր>> կրթահամալիր»-ի ավագ դասարանի սաների բողոքը և դրանից առաջացած խնդիրները՝ խորհուրդը որոշեց դիմել ՀՀ ԿԳՆ-ին՝ 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1602-Ն որոշման N 2 հավելվածում իրականացնել փոփոխություններ:

**2.Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ համաձայն «<Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 11 նոյեմբերի 2004 թվականի թիվ 1602-Ն որոշմամբ հաստատված «<Փոքր Միեր>> Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրության 56-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին՝ ՀՀ ԿԳ նախարարությունը անհարժեշտ է համարում ձևավորել խորհրդի նոր կազմ:

**3.Ակնկալվող արդյունքները**

«<Փոքր Միեր>> Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի նոր խորհուրդը կապահովի կրթահամալիրի կառավարումը՝ մինչև «<Փոքր Միեր>> Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումը և կազմակերպության պետական գրանցումը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոցի կառավարման խորհրդի ձևավորումը:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություն չի առաջացնի:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություն չի առաջացնի: